«ՀԱՅԱՆՏԱՌ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Տնօրեն
«АРМЛЕС»
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ
Директор
«HAYANTAR»
STATE NON COMMERCIAL ORGANIZATION
Director

№ 11-12/297

«27» «12» 2023թ.

0011, ք. Երևան, Ա.Արմենակյան 129
0011, Армения, г. Ереван, А. Арменакяна 129
A. Armenakyan 129, Yerevan, 0011, Armenia
Էլ.փոստ՝/e-mail:/эл.почта:info@armforest.am
Հեռ.՝/tel:/тел: 010/65-37-16, 010/65-02-35

Համազասպ Հովսեփյան ԱՁ -ի տնօրեն
Համազասպ Հովսեփյանին

Ծ Ա Ն Ու Ց Ու Մ
Պայմանագիրը միակողմանի (մասնակի) լուծելու մասին

Հարգելի պարոն Հովսեփյան

«Հայանտառ» ՊՈԱԿ -ի և Համազասպ Հովսեփյան ԱՁ -ի միջև 2023 թվականի նոյեմբերի 21-ին կնքված «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» ՀԱ-ԳՀԱՊՁԲ-2023/82 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը, ոչ ուշ քան 2023 թվականի դեկտեմբերի 11-ը, «Հայանտառ» ՊՈԱԿ-ին պետք է մատակարարեր փշալար՝ համապատասխանաբար՝ 1-ին չափաբաժնով 1700կգ «Տաշիրի անտառտնտեսություն», 2-րդ չափաբաժնով՝ 800կգ «Սյունիքի անտառտնտեսություն», 3-րդ չափաբաժնով՝ 1100կգ «Սիսիանի անտառտնտեսություն» մասնաճյուղեր: 2023 թվականի դեկտեմբերի 27-ի դրությամբ Համազասպ Հովսեփյան ԱՁ -ի կողմից չի մատակարարել վերոնշյալ ապրանքը:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.1 կետը «Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի» և պատասխանատու ստորաբաժանման ղեկավար Տարոն Մանուկյանի 2023 թվականի դեկտեմբերի 25-ի զեկուցագիրը Հանձնաժողովը միակողմանի լուծում է 2023 նոյեմբերի 21-ին կնքված ՀԱ-ԳՀԱՊՁԲ-2023/82 ծածկագրով պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ Համազասպ Հովսեփյան ԱՁ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900145001484 հաշվեհամարին փոխանցել 98835 (իննսունութ հազար ութ հարյուր երեսունհինգ) ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագիր 6,2 կետի համաձայն), տույժը հաշվարկված է մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25-ը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 328500 (երեք հայուր քսանութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 492750 (չորս հարյուր իննսուներկու հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000698 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ եթե մինչև 2024 թվականի հունվարի 8-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 328500 (երեք հայուր քսանութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 492750 (չորս հարյուր իննսուներկու հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ որակավորման ապահովման գումարները, ապա Համազասպ Հովսեփյան ԱՁ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (հրավեր 8.14 կետի 2-րդ պարբերություն /սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին/): Նշված գումարներն

անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2024 թվականի հունվարի 9-ը ներառյալ ներկայացնել «Հայանտառ» ՊՈԱԿ-ի գնումների բաժին:

Տնօրեն՝ Սևակ Մարկոսյան

Գնումների բաժին
Մանե Խաչատրյան
094-64-20-33